Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄՈՏ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ս. Կարայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
Ց. Գևորգյան	«Հայաստանի վաճառականների միություն» ՀԿ-ի նախագահ
Փ. Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Ս. Գրիգորյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի փոխնախագահ

Մասնակիցներ՝

Ա. Հովհաննիսյան	ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Դ. Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տ. Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ ԿԱ պետական եկամուտների նախագահի տեղակալ
Ա. Խաչատրյան	ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ
Շ. Սարդարյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Ծ. Սողոմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Տ. Աբրահամյան	«Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Գ. Պողոսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար

Ա. Օհանյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության պետ
Ա. Վարդանյան	Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի աշխատակազմի ղեկավար

Հրավիրվածներ՝

Հ. Ավագյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Դ. Հարությունյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Ի. Հովհաննիսյան	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի փորձագետ
Ա. Մարտիրոսյան	ՎԶԵԲ գործարարության աջակցման գրասենյակի կողմից ներգրավված փորձագետ
Ա. Բազիկյան	«Ակբա լիզինգ» կազմակերպության գլխավոր տնօրեն
Վ. Մարգարյան	Եվրոպական բիզնես ասոցիացիայի խորհրդի նախագահ
Լ. Իսրաելյան	Եվրոպական բիզնես ասոցիացիայի խորհրդի իրավաբան
Գ. Գևորգյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության պետի տեղակալ
Հ. Հովհաննիսյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ՓՄՁ զարգացման վարչության գլխավոր մասնագետ

1. Նախորդ նիստի արդյունքների ամփոփում

1.1. Պետական գնումների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքի ծագման հավաստագրի տրամադրման կարգի սահմանման վերաբերյալ

(Գևորգ Պողոսյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն Անդրանիկ Ալեքսանյանին՝ ներկայացնել պետական գնումների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքի ծագման հավաստագիր պահանջելու դեպքերի վիճակագրություն (տոկոսային արտահայտությամբ).

3) ևս մեկ անգամ քննարկել պետական գնումների շրջանակներում ԵԱՏՄ երկրների ծագման ապրանքների՝ մինչև 15 տոկոս գնային առավելության սահմանման նպատակահարմարության հարցը:

1.2. ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի վերախմբագրման աշխատանքների ընթացքի վերաբերյալ

(Գևորգ Պողոսյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանին՝ ևս մեկ անգամ քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխվող հոդվածից բխող հնարավոր խնդիրները, նախագիծը համաձայնեցնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ և հարցի վերաբերյալ վերջնական առաջարկները ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

2) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝ համակարգային ուսումնասիրել տնտեսական հանցագործությունների հնարավորինս ապաքրեականացման խնդիրը՝ առաջնորդվելով միջազգային փորձով:

1.3. ՀՀ Հարկային Օրենսգրքում տեղ գտած ՓՄՁ-ներին առնչվող խնդրահարույց դրույթների քննարկման անհրաժեշտության վերաբերյալ

(Գևորգ Պողոսյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝ խորհրդի անդամների հետ կազմակերպել քննարկում և, մինչև 2016 թվականի դեկտեմբերի 23-ը, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու հստակ առաջարկներ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում ձևավորված Եկամուտների քաղաքականության կատարելագործման խորհրդի հաջորդ նիստում քննարկելու համար:

1.4. ՓՄՁ-ների և առևտրի կենտրոնների միջև գնորդ-մատակարար շղթայում առկա խնդիրների և սուպերմարկետներում, առևտրի կենտրոններում հայկական ապրանքներին առաջնահերթություն տալու անհրաժեշտության վերաբերյալ

(Գևորգ Պողոսյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝ մանմամասն ուսումնասիրել խնդիրը ՓՄՁ զարգացման խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել հարցի կարգավորման անհրաժեշտության վերաբերյալ հստակ առաջարկներ:

1.5. Բիզնես ինկուբատորի ստեղծման հարցով հրավիրված միջազգային փորձագետի կողմից ներկայացված զեկույցի վերաբերյալ

(Գևորգ Պողոսյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝ ՓՄՁ զարգացման խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել տեղեկատվություն՝ Բիզնես ինկուբատորի ստեղծման հարցով հրավիրված՝ միջազգային փորձագետի կողմից ներկայացված զեկույցի նպատակահարմարության մասին:

2. ՀՀ-ում լիզինգի որպես այլընտրանքային ֆինանսական գործիքի զարգացման անհրաժեշտության վերաբերյալ

(Իզաբելա Հովհաննիսյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Վարդան Արամյանի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանի և շահագրգիռ մյուս մարմինների ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել ՀՀ-ում լիզինգի՝ որպես այլընտրանքային ֆինանսական գործիքի զարգացմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթը և ՓՄՁ զարգացման խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել հստակ առաջարկություններ:

3. Մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի 158-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգի մշակման ընթացքի վերաբերյալ

(Վախթանգ Միրումյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Վարդան Հարությունյանին՝ քննարկել տնտեսվարող սուբյեկտների համար մաքսային հայտարարագրերի՝ էլեկտրոնային եղանակով ներկայացման համապատասխան ծրագրի հասանելիությունը ավելի ցածր գնով իրականացնելու հնարավորության հարցը և ներկայացնել առաջարկություն:

4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^1 և 170^3 հոդվածներով սահմանված տուգանքների կիրառման պայմանների վերանայման անհրաժեշտության վերաբերյալ

(Հակոբ Ավագյան, Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^1-րդ և 170^3-րդ հոդվածներով սահմանված տուգանքների կիրառման

պայմանների վերանայման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությունը շահագրգիռ մարմինների հետ քննարկելուց հետո ներկայացնել առաջարկություն:

5. Այլ հարցեր

ՓՄՁ զարգացման խորհրդի հաջորդ նիստի անցկացման մասին առաջարկ՝ դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

(Կարեն Կարապետյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանին՝

1) վերանայել ՓՄՁ զարգացման խորհրդի նիստի օրակարգի ձևավորման և խորհրդի քարտուղարության աշխատակարգը և ներկայացնել համապատասխան առաջարկություն.

2) ներկայացնել առաջարկություն՝ ՓՄՁ զարգացման խորհրդի անդամների կազմը մասնավոր հատվածի նոր ներկայացուցիչներով համալրելու վերաբերյալ.

3) սահմանել հսկողություն՝ ՓՄՁ զարգացման խորհրդի քարտուղարության միջոցով նիստերը պատշաճ մակարդակով ու կազմակերպված հրավիրելու ուղղությամբ.

4) ՓՄՁ զարգացման խորհրդի նիստի օրակարգի և մյուս տեղեկությունների մասին նախօրոք տեղեկացնել խորհրդի անդամներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ